մականութեամբ կը մնայ իբր բուն «Հովուանոց»ը, որուն ընկերովի սեպհականատէր՝ Հայք, Յոյնք և Լատինք Ծննդեան գիշերը, ի հնումն, կ'երթային հոն թափօրով, «Փառք ի բարձունս» երգելու և պատարագելու համար։ Մենք վերև յիշատակեցինք մեր ազգային յիշատակութիւնը, որ կը հաստատեն այս պարագան։ Բայց աւելի վերջին դարերու մէջ, մինչև 1813 թուականը՝ երբ ուխտաւորք և միաբանութիւնը Ս. Ծննդեան տօնին հանդիսաւորութեամբ Բեթղեհէմ կ'երթային՝ սովորութիւն էր Ս. Աստուածածնի fառաատեմ պահած մեղարան ուխտի երթալով և ապա դուրսի կողմը, անոր առջևը կեցած՝ Հովուաց տեղւոյն դիմացը, «Խորհուրդ մեծ» շարականէն յետոյ կը կարդային Աւետարան և կ'երգէին «Փառք ի բարձունս» երգը. և ապա կը դառնային Ս. Ծննդեան եկեղեցին (տե՛ս ձեռ. Ս. Աթոռոյ մատ.ին, թ. 893, էջ 245)։ Օտար ծիսարաններն ալ հետևեալ կերպով կը նկարագրեն «Հովուանոց» երթալու հանդիսական թափօրը. «Կէս գիշերին զանգակահարութիւն կ'ըլլայ, բոլոր ուխտաւորները կը հաւաքուին Բեթղեհէմի Ս. Ծննդեան եկեղեցին. և հո՛ն կը կատարեն գիշերային ժամերգութիւնը, կղերը կ'զգեստաւորուի Ս. Այրին մէջ եւ կը մատուցանէ գիշերուան պատարագը. յետոյ կը կազմուի մեծ թափօր, ժողովուրդը եւ կղերը լապտերներով եւ մոմեղինօք եւ կանթեղներով կ'իջնեն Հովուաց դաշտի «Փառք ի բարձունս»ի եկեղեցին, ուր կը կատարուի առաւօտեան ժամերգութիւնը եւ բարձրաստիճան եկեղեցական մը կը պատարագէ. լուսածագին՝ բոլորն ալ կը վերադառնան ի Բեթղեհէմ, և Պատրիարքը աւագ սեղանին վրայ Ս. պատարագ կը մատուցանէ.» (տե՛ս Bethléem, le Sanctuaire de la Nativité, էջ 182)։ Դարաւոր սովորութիւն մը, այժմ թէեւ խափանուած, բայց Երուսաղէմի Հայ Եկեղեցին՝ նախընտրած է «քաջ հովուին» ծննդեան Ս. Այրին մէջ երգեր հրեշտակային չքնաղ երգը, — «Փառք ի բարձունս Աստուծոյ» եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն»։